Ա. Պ. ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԿ(բ)Կ ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (1926—1929 ԹԹ.)

*1925 թվականի վերջում լուծելով ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի գլխավոր խնդիրները, կոմունիստական կուսակցությունը թևակոխում է պատմական նոր էտապ՝ երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը նախապատրաստելու ժամանակաշրջանը։ Անհրաժեշտություն է դառնում արագացնել սոցիալիզմի կառուցման տեմպերը։*

*Թևակոխելով պատմական նոր էտապ, մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության հարցը դառնում է ներկուսակցական պայքարի գլխավոր առանցքը։*

*Դեռևս 1923—1924 թթ. հատկապես Վ. Ի. Լենինի մահից հետո Տրոցկին վերսկսում է իր պայքարը կուսակցության գլխավոր գծի դեմ, փորձելով լենինիզմը նենգափոխել տրոցկիզմով։ Տրոցկու կարծիքով, առանց արևմտաեվրոպական պրոլետարիատի պետական աջակցության հնարավոր չէ սոցիալիզմ կառուցել Սովետական Միությունում։ Կապիտուլյանտական այս տրամադրություններին վճռական հակահարված է տալիս կուսակցության XIV կոնֆերանսը 1925 թ. ապրիլին։ Կոնֆերանսը նշում է, որ Սովետական Միությունում սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար սեփական բուրժուազիային տնտեսապես հաղթահարելու համար մեր ներքին ռեսուրսները՝ բանվորների ու գյուղացիների ուժերը, լիովին բավական են, սակայն սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար անհրաժեշտ է հաղթական սոցիալիստական հեղափոխություն մի շարք երկրներում։*

*1925 թ. դեկտեմբերի 18-ին Մոսկվայում գումարվում է կուսակցության XIV համագումարը։ Ելնելով Վ. Ի. Լենինի այն դրույթից, որ «Սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, որն ընդունակ է վերակառուցելու նաև հողագործությունը»[1], համագումարը գտնում է, որ ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության հաղթանակի համար պայքարը պետք է դարձնել կուսակցության գլխավոր խնդիրը։ Այն պետք է տանել այնպես, որ մեր երկիրը մեքենաներ ու սարքավորումներ ներմուծող երկրից դառնա մեքենաներ ու սարքավորումներ արտադրող երկիր[2]։*

*XIV համագումարի նախօրյակին կուսակցության ներսում ձևավորվում է այսպես կոչված «նոր օպոզիցիան» Կամենևի, Զինովևի և Ռադեկի գլխավորությամբ։ «Նոր օպոզիցիան» ոչինչ նոր բան չէր ասում, նրա սնուցողն ու գաղափարախոսը Տրոցկին էր։ Տրոցկիզմի դեմ մղվող պայքարում ՀԿ(բ) կուսակցության Երևանի գավառային կազմակերպությունը կանգնում է լենինիզմի պաշտպանության դիրքերում։*

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 591։

2 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», Երևան, 1955, 2-րդ մաս, էջ 246։

1925 թ. ՀԿԿ Երևանի կազմակերպության ներսում ֆրակցիոն խմբավորումներ չեն եղել։ Ներկուսակցական պայքարը սուր կերպով չի դրսևորվել, սակայն դա դեռ չի նշանակում, որ այն ընդհանրապես գոյություն չի ունեցել։ Վերականգման շրջանի վերջում կուսակցության Երևանի կազմակերպության ներսում ֆրակցիոն պայքարը իր ձևավորման ու խմորման շրջանն է ապրում։ Նա զարգանում է հիմնականում երկու ուղղությամբ։ Անտեսելով սոցիալիստական սեկտորի համընթաց վերելքը ՆԷՊ-ի պայմաններում, կուսակցության Երևանի կազմակերպության որոշ անդամներ գտնում են, որ նոր տնտեսական քաղաքականությունը՝ դա կուլակների ու քաղաքային նեպմանների քաղաքականությունն է։ Նրանք բացեիրաց հայտարարում են՝ «էլ ինչ ազատություն, էլ ինչ Խորհրդային իշխանություն, որ առաջվա նոքարը հիմա մնացել է նոքար»[3]։ Նրանք հախուռն կերպով կուլակների կողքին են դնում նաև միջակ գյուղացիությանը։ Ըստ նրանց, եթե գյուղացին ունի 2 կամ 3 կով, ապա այդ տնտեսությունը համարվում է կուլակային տնտեսություն[4]։ Հասարակական կյանքի սխալ, ոչ գիտական մեկնաբանումը, բնականաբար, ծնում է նաև սխալ ու շատ հաճախ պայքարի վտանգավոր ու արատավոր մեթոդներ։ Այս առումով բացառություն չէին կազմում նաև վերոհիշյալ տեսակետին կառչած կուսակցականները։ Նրանք գտնում էին, որ անհրաժեշտ է խլել կուլակների ու մասնավոր առևտրականների ձեռքից այն ամենը, ինչ հնարավոր էր։ Դժվար չէ նկատել, որ առաջ է քաշվում կուլակներին որպես դասակարգ լիկվիդացնելու, նրանց կուլակաթափ անելու քաղաքականությունը։ Եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ նրանք կուլակային տնտեսությունների շարքն էին դասում նաև միջակ գյուղացիական տնտեսությունները, ապա պարզ կդառնան նաև այն վտանգավոր հետևանքները, որոնց անխուսափելիորեն կհանգեցներ նման քաղաքականության կիրառումը։ Արդյունքը կլիներ այն, որ կտապալվեր ժողովրդական տնտեսության վերականգման գործը։ ՆԷՊ-ի պայմաններում գյուղացիական տնտեսությունների զարգացումը հիմնականում ընթանում էր միջակացման ուղիով։ Միջակը հողագործության մեջ կենտրոնական դեմք էր, ունեզրկել նրան՝ նշանակում էր կասեցնել գյուղատնտեսության զարգացումը, հարվածել գյուղատնտեսության վերականգմանը։ Դեռ ավելին, այդ շրջանում ոչ միայն միջակներին, այլև կուլակներին չէր կարելի կուլակաթափ անել, լիկվիդացնել որպես դասակարգ, քանի որ նրանց ձեռքում էր գտնվում արտադրական միջոցների զգալի մասը, պետությունը նրանցից գանձում էր զգալի քանակությամբ ապրանքային հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ։ Կուլակային տնտեսությունները այդ շրջանում դեռևս տնտեսական մեծ ուժ էին ներկայացնում, և անհրաժեշտ էր այդ ուժը օգտագործել ժողովրդական տնտեսության վերականգման համար։ Այդ քաղաքականությունը հղի էր ծանր հետևանքներով ոչ միայն տնտեսական իմաստով, այլև քաղաքական։ Նման քաղաքականության կենսագործումը մեծաթիվ միջակ գյուղացիությանը կգրգռեր սովետական կարգերի դեմ, կնետեր նրանց հակասովետական լագերը, խիստ կհարվածեր բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքին՝ պրոլետարիատի դիկտատուրային։

---

3 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 526, թ. 83։
4 Նույն տեղում, թ. 81։
5 Նույն տեղում, թ. 82։

Երևանի կազմակերպության ներսում խմորվում է ևս մեկ տեսակետ, ըստ որի անտեսվում է շահագործող դասակարգերի առկայությունը ՆԷՊ-ի պայմաններում։ Այս տեսակետին հարած կուսակցականները գտնում են, որ մեզ մոտ, Հայաստանում կուլակներ չկան[6] և եթե նրանք այսպես թե այնպես կարող են անգամ գոյություն ունենալ, ապա հարկ չկա նրանցից վախենալ, քանի որ ագիտացիայի ու պրոպագանդայի միջոցով կարելի է «կուլակներին, քաղաքային նեպմաններին վերադաստիարակել, խելքի բերել, հասկացնել և դարձնել խորհրդային իշխանության բարեկամներ»[7]։ Դժվար չէ նկատել, որ այս տեսակետին հարած կուսակցականները անտեսում էին դասակարգային շերտավորման փաստը ՆԷՊ-ի պայմաններում, դրանով իսկ անտեսելով սրվող դասակարգային պայքարը թե՛ գյուղում և թե՛ քաղաքում։

Կուլակային վտանգի գերագնահատումը, սոցիալիզմի կառուցման գործում միջակ գյուղացիության դերի թերագնահատումը «նոր օպոզիցիայի» կապիտուլյանտական հայացքների դրսևորումն էր կուսակցության Երևանի կազմակերպության մեջ։ Ինչ վերաբերվում է շահագործող դասակարգերի անտեսման, կուլակային վտանգի թերագնահատման, դասակարգային պայքարի ժխտման ու կուլակներին սովետական իշխանության բարեկամներ դարձնելու մտայնությանը, ապա դա աջ թեքման սաղմերն էին կուսակցության Երևանի կազմակերպության մեջ։ ՀԿ(բ)Կ Երևանի կազմակերպության VII կոնֆերանսը (1925 թ. հոկտեմբերի 31) դատապարտում է կազմակերպության մեջ տեղ գտած այդ երկու թեքումները և նշում, որ անհրաժեշտ է անհաշտ պայքար մղել ինչպես կուլակային վտանգի գերագնահատման, այնպես էլ այդ վտանգի թերագնահատման դեմ։

1926 թ. ներկուսակցական պայքարը կազմակերպության ներսում ավելի է սրվում։ Երևանի գավառով մեկ սկսվում է կուսակցության XIV համագումարի որոշումների քննարկումը։

XIV համագումարի նյութերի քննարկման ժամանակ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության մեջ սկսում է ակտիվանալ այն թևը, որը գերագնահատում էր կուլակային վտանգը։ Ճիշտ է այս շրջանում ևս կազմակերպության ներսում օպոզիցիան կազմակերպչորեն չի ձևավորվում, սակայն ակրնհայտորեն ակտիվանում է։ Բջջային և շրջանային կուսակցական ժողովներում «նոր օպոզիցիայի» կողմնակիցները իրենց ելույթներում հարցականի տակ են դնում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր երկրում, նրանք ՆԷՊ-ը դիտում են միայն որպես նահանջ և բացեիբաց հայտարարում են, որ այդ քաղաքականությունից օգտվում է միայն կուլակը, պահանջում են թույլ տալ կուսակցության ներսում ֆրակցիաների ազատություն և այլն[9]։

Ներկուսակցական պայքարը ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության ներսում ավելի է սրվում ՀամԿ(բ)Կ և ԿՎՀ-ի 1926 թ. հուլիսյան միացյալ պլենումի որոշումների քննարկման ժամանակ։ Այն դիսկուսիոն պայքարի բնույթ է ստանում։ Քաղաքային և շրջանային կուսակցական ընդհանուր և

6 Նույն տեղում, թ. 81։
7 Նույն տեղում, թ. 82։
8 Նույն տեղում, գ. 530, թ. 1։
9 Նույն տեղում, գ. 884, թ. 37։

բջջային միացյալ ժողովներին մասնակցում են ամբողջ կազմակերպության անդամ և անդամության թեկնածուների ավելի քան 80%-ը[10]։

Պլենումի որոշումների քննարկման ժամանակ տեղական օպոզիցիայի ձայնը, նրա քաղաքական տեսակետները հնչում են ավելի պարզորոշ, ու հասկանալի է դառնում, որ «նոր օպոզիցիան» Երևանի կազմակերպությունում ևս ունի իր կրքոտ պաշտպանները։

Կուսակցական և կոմերիտական ժողովներում տեղական օպոզիցիոներները բացեիբաց հայտարարում են, որ մեր երկրում հնարավոր չէ սոցիալիզմի հաղթանակը, որ ՆԷՊ-ը միայն ու միայն նահանջ է և երբեք էլ հարկային դաժան քաղաքականությամբ հնարավոր չէ սահմանափակել կապիտալիզմի ռեստավրացիան մեր երկրում[11]։ Նրանք պնդում են, որ սոցիալիստական հեղափոխությունից հիմնականում օգտվեցին կուլակները, գյուղացիությունը հող ստացավ, իսկ բանվոր դասակարգը՝ միայն դատարկ իշխանություն[12]։ Ինչ վերաբերում է սովետական իշխանության վարկային քաղաքականությանը, ապա այս հարցում ևս նրանք պաշտպանում են «նոր օպոզիցիայի» տեսակետը, հայտարարելով, որ վարկային ու կոոպերատիվ ընկերություններից հիմնականում օգտվում են դարձյալ ու դարձյալ կուլակները[13]։ Տեղական օպոզիցիան այստեղ կանգ չի առնում. նա հարձակումներ է կատարում կուսակցության վրա, սովետական պետական ապարատի վրա։ Փորձելով խախտել կուսակցության միասնականությունը օպոզիցիոներները հայտարարում են, որ կուսակցության ներսում ոչ մի դեմոկրատիա գոյություն չունի, քանի որ չի թույլատրվում նրա ներսում օպոզիցիայի գոյությունը[14], ինչ վերաբերում է սովետական պետական ապարատին, ապա նրանց կարծիքով դա վերից վար ամբողջովին բյուրոկրատացած մի ապարատ է[15]։

ՀամԿ(բ)Կ և ԿՎՀ հուլիսյան միացյալ պլենումի որոշումների քննարկման ժամանակ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպություններում օպոզիցիան նոր պարտություն է կրում[16]։

1926 թ. հոկտեմբերի վերջերին գումարվում է կուսակցության XV կոնֆերանսը, որտեղ տրվում է տրոցկիզմի քաղաքական գնահատականը. այն որակվում է որպես մենշևիկյան թեքում մեր կուսակցության ներսում։ Կոնֆերանսը կուսակցական կազմակերպությունների առջև խնդիր է դնում ուժեղացնել պայքարը տրոցկիստական-զինովևական բլոկի դեմ։

1926 թ. նոյեմբերի 25-ին գումարվում է ՀԿ(բ)Կ Երևանի կազմակերպության VIII կոնֆերանսը։

Կոնֆերանսը լսելով Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը XV կոնֆերանսի արդյունքների մասին, ամբողջովին հավանություն է տալիս նրա որոշումներին և խնդիր է դնում ուժեղացնել գաղափարական պայքարը՝ ընդդեմ կուսակցության ներսում հանդես եկած սոցիալ-դեմոկրատական թեքման, արմատախիլ անել ֆրակցիոն աշխատանքի և կուսակցության լենինյան սկզբունքները խախ-

---

10 Նույն տեղում, գ. 771, թ. 53։
11 Նույն տեղում, թ. 59։
12 Նույն տեղում, թ. 57։
13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում, թ. 58։

տելու ամեն մի փորձ[17]։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի հաշվետու զեկուցմամբ կոնֆերանսում հանգես է գալիս կազմակերպության առաջին քարտուղար Արամ Շահգելդյանը։ Նա մերկացնում և հերքում է տեղական օպոզիցիայի այն պնդումները, թե իբր մեր էկոնոմիկայում ամբողջությամբ իշխում է մասնավոր կապիտալիստական սեկտորը, որ նոր տնտեսական քաղաքականությունից հիմնականում օգտվում ու ուռճանում են կուլակները, որ կուսակցությունը վերասերվել ու կտրվել է մասսաներից, որ սովետները դադարել են արդեն աշխատավորական լինելուց և պետական ապարատը վերից վար արդեն բյուրոկրատացել է։

Այն, որ գավառի գյուղացիական տնտեսությունները զարգանում են ոչ թե կուլակացման, այլ միջակացման ուղիով, երևում է հետևյալ թվական ցուցանիշներից։ 1926 թ. Երևանի գավառում միջակ տնտեսատեր գյուղացիները կազմում էին ամբողջ գյուղացիության 48%-ը, չքավորները՝ 43%-ը, իսկ ունևոր կուլակները՝ միայն 9%[18]։

Ճիշտ է, գավառի գյուղատնտեսության վերականգնման գործում անժխտելի է կուլակային տնտեսությունների դերը, սակայն այն ամբողջությամբ ու գլխավորապես վերագրել նրանց՝ բացարձակ սխալ է։ Գյուղատնտեսության վերականգնման գործում վճռական դերը պատկանել է չքավոր, առավել ևս միջակ գյուղացիական տնտեսություններին, որոնց զարգացումը ընթացել է ոչ թե շահագործման հիման վրա, այլ կոոպերացման։ Կոոպերացիայի վրա հիմնված գյուղացիական տնտեսությունները գյուղատնտեսության վերականգնման գլխավոր ու վճռական ուժերն էին։ Իսկ պրոլետարիատի դիկտատուրայի օրոք, թեկուզ և նոր տնտեսական քաղաքականության պայմաններում այդ տնտեսությունները կարող էին զարգանալ միայն ու միայն սոցիալիստական վերակառուցման ուղիով, բայց ոչ երբեք կապիտալիստական։ «Նոր օպոզիցիայի» այն մեղադրանքը, որ ՆԷՊ-ի օրոք գյուղացիական տնտեսությունները զարգանում են կապիտալիստական ուղիով, հենց այստեղ, փաստերի և պատմության զարգացման տրամաբանության ուժով հերքվում է։ Դժվար չէ հերքել նաև տեղական օպոզիցիայի այն տեսակետը, որ իբր Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվները վարկավորում են հիմնականում կուլակային տնտեսություններին, որ նրանք ոչ աշխատավորական կազմակերպություններ են և երբեք էլ չեն ծառայում չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների շահերին։

Այս տեսակետը մեռժելու համար խոսենք փաստերով։ 1926 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով, Հայաստանում գործել են 33 վարկային ընկերություններ, որոնցում չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունները կազմել են ամբողջ անդամագրված տնտեսությունների 94%-ը, իսկ ունևոր տնտեսությունները՝ միայն 6%-ը[19]։ Այսպիսով, 1926 թ. Հայաստանի վարկային ընկերությունները ոչ թե ունևոր դասակարգի կազմակերպություններ էին, այլ չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների։ Դրանք աշխատավորական կոոպերատիվներ էին։ Գուցե վարկային ընկերությունների ամբողջ գումարի առյուծի բաժինը հասել է 6% ունևոր տնտեսությունների՞ն։ Այստեղ ևս

---

17 Նույն տեղում, գ. 749, թ. 5։
18 Նույն տեղում, գ. 906, թ. 165։
19 «Մաճկալ», 1927, № 98։

փաստերն ու թվերը խոսում են ոչ հօգուտ «նոր օպոզիցիայի»։ Կոոպերատիվների 774 հազար 894 ռուբլի ընդհանուր վարկից չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունները ստացել են 725 հազար 939 ռուբլի կամ ամբողջ վարկի 93,8%-ը։ Ունևորներին տրված վարկի բաժինը կազմում է ընդամենը 6,2%[20]։ Այսպիսով տեսնում ենք, որ երևանյան օպոզիցիոներները այստեղ ևս սայթաքում են, նրանց այս մեղադրանքն ևս չի համապատասխանում իրականությանը։ Ինչ վերաբերում է տեղական սովետների իբր ոչ բանվորա-գյուղացիական բնույթին, դժվար չէ հերքել «նոր օպոզիցիայի» տեղական պաշտպանների նաև այս մեղադրանքը։ Ինչպես ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության VIII կոնֆերանսում Երևանի կոմիտեի տված հաշվեքննությունից, այնպես էլ լրացուցիչ այլ նյութերից պարզ երևում է, որ կուսակցության Երևանի կոմիտեն տեղական սովետների ընտրական կամպանիայի և նրանց աշխատանքների ղեկավարման վրա պատշաճ ուշադրություն է դարձրել։ Բանը նրանումն է, որ գյուղում սրված դասակարգային պայքարը իր արտահայտությունն է գտնում նաև սովետների ընտրությունների ժամանակ։ Կուլակային տարրերը ջանք չեն խնայում թափանցելու պրոլետարիատի պետության տեղական օրգանների մեջ։ Այդ նպատակին հասնելու համար նրանք ջանում են իրենց կողմը քաշել միջակ գյուղացիությանը։

Չնայած կուլակային տարրերի բոլոր մեքենայություններին 1926 թ. Երևանի գավառում տեղական սովետների ընտրական կամպանիան անցնում է քաղաքական ու կազմակերպչական բարձր մակարդակով։ Բանվորա-գյուղացիական աշխատավոր մասսաները կուսակցականների հետ բլոկ կազմած սովետներում ընտրում են իրենց շարքերից լավագույն ներկայացուցիչներին։ Եթե 1925 թ. գյուղական սովետներում ընդգրկված էին 212 կուսակցականներ, կամ ամբողջ ընտրվածների 10,12%-ը, ապա 1926 թ. այդ թիվը հասնում է 354-ի, որը կազմում է ամբողջ ընտրվածների 16,2%-ը[21]։

Երևանի քաղաքային սովետում կուսակցականներն ու կոմերիտականները միասին վերցրած կազմում էին ամբողջ ընտրվածների 53%-ը[22]։ 1926 թ. ընտրությունների ժամանակ ավելի է բարելավվում քաղաքային ու գյուղական սովետների սոցիալական կազմը։ Երևանի քաղաքային սովետի ամբողջ կազմի 45%-ը բանվորներ էին[23], իսկ գյուղական սովետներում՝ հիմնականում չքավոր ու միջակ գյուղացիության լավագույն ներկայացուցիչները։ Այսպիսով, հերքվում է նաև «նոր օպոզիցիայի» տեղական ներկայացուցիչների այն մեղադրանքը ևս, որ իբր սովետները դադարել են աշխատավորական լինելուց և կուսակցությունը կորցրել է նրանց նկատմամբ իր ղեկավար ֆունկցիան։

ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության VIII կոնֆերանսը հերքում է նաև կուսակցության հասցեին օպոզիցիոներների հարուցած մեղադրանքները։ Ինչպես հաշվետու զեկուցման մեջ, այնպես էլ ելույթ ունեցողները դատապարտում և փաստերով ապացուցում են, որ հաշվետու ժամանակաշրջանում ավելի է ամրապնդվել կազմակերպության կապը աշխատավորության հետ, ավելի է բարձրացել նրա հեղինակությունը աշխատավորության

20 Նույն տեղում։
21 «Խորհրդային Հայաստան», 1926, № 278։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում։

շրջանում։ Հենց այն փաստը,—նշված է Հաշվետու զեկուցման մեջ,—որ մեկ տարվա ընթացքում կազմակերպության շարքերն ընդունվելու համար դիմում են տվել 1509 հոգի, խոսում է այն մասին, որ կուսակցության հեղինակությունը ոչ թե անկում, այլ վերելք է ապրում աշխատավորության շրջանում[24]։ Դիմողներից Հաշվետու շրջանում կազմակերպության շարքերն են ընդունվում 435 հոգի, որից 361-ը բանվորներ ու գյուղացիներ[25]։

Հաշվետու շրջանում բարելավվում է ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության սոցիալական կազմը։ 1926 թ. վերջում կազմակերպության 114 բջիջներում հաշվառման վերցված 2356 կուսանդամների ու անդամության թեկնածուների մեջ բանվորական կորիզը կազմում է 30,1%-ը, գյուղացիականը՝ 37,3%-ը, իսկ ինտելիգենցիայինը՝ 32,6%-ը[26]։

Հակահարված տալով «նոր օպոզիցիային», ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության VIII կոնֆերանսը ամփոփում և ընդհանրացնում է նաև կուսակցական կազմակերպության աշխատանքները արդյունաբերության, գյուղատնտեսության, կոոպերատիվ շինարարության, առևտրի և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի զարգացման ու վերակառուցման գործում։ Կոնֆերանսը Հաշվետու շրջանում կուսակցության Երևանի գավառային կոմիտեի վարած քաղաքական գիծը գտնում է ճիշտ և գործնական աշխատանքները՝ բավարար[27]։ Ելնելով ՀամԿ(բ)Կ XIV համագումարի որոշումներից, կոնֆերանսը երկրի սոցիալիստական ինդուստրացման համար պայքարի կազմակերպումը համարում է գավառի կուսակցական կազմակերպության հետագա գործունեության գլխավոր խնդիրը։

Ողջունելով ներկուսակցական շինարարության, կուսակցական կազմակերպության ամրապնդման և կուսակցության միասնականության համար Երևանի կոմիտեի վարած գիծը, կոնֆերանսը ընդգծում է, որ այսուհետև ևս անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը ամեն երանգի օպոզիցիոն խմբավորումների դեմ, աչքի լույսի պես պահպանել կուսակցության միասնականությունը և նրա շարքերի պողպատյա կարգապահությունը[28]։

Ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքներում կոնֆերանսը կուսակցության Երևանի գավառային կազմակերպության գլխավոր խնդիրն է համարում լենինիզմի գաղափարների տարածումն ու մասսայականացումը, ինչպես կուսակցական, այնպես էլ անկուսակցական լայն խավերի մեջ, ուժեղացնելով պայքարը հակալենինյան գաղափարախոսության դեմ[29]։ Կոնֆերանսը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ կուսակցության Երևանի գավառային կազմակերպությունը աներեր կանգնած է լենինյան դիրքերի վրա և ընդունակ է հակահարված տալու նրանց, ովքեր փորձում են շեղել կուսակցությունը սոցիալիզմի կառուցման լենինյան ուղուց։

Երկիրը թևակոխում է 1927 թվականը։ Ինդուստրացման առաջին տարվա հաջողություններն արդեն խոսում են սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի կենսունակության մասին։

---

24 Նույն տեղում, 1926, № 279։

25 Նույն տեղում։

26 ՀԿ(բ) կուսակցության Երևանի կազմակերպությունը Իվերով, 1927 թ. սեպտեմբեր։

27 «Երևանի գավառային VIII կոնֆերանսի բանաձևեր», 1927, էջ 5։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում, էջ 16։

1926 թ. «Նոր օպոզիցիայի» պարտությունից հետո տրոցկիստական-զինովևական բլոկը նորից գլուխ է բարձրացնում, հանգես գալով այսպես կոչված «83-ի պլատֆորմով»։ Առերես ընդունելով կուսակցության միասնության, ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան սկզբունքները, իրականում այդ բլոկը գործնական քայլեր է կատարում ստեղծելու իր առանձին անլեգալ կուսակցությունը, պառակտելու կուսակցության լենինյան միասնականությունը, շեղելու նրան սոցիալիզմի կառուցման գլխավոր ուղուց։ Պայքարը կուսակցության ներսում 1927 թ. բռնկվում է նոր ուժով։ Այդ պայքարը սուր բնույթ է ընդունում նաև ՀԿ(բ) կուսակցության Երևանի գավառային կազմակերպության ներսում, և տեղական օպոզիցիան սկսում է կազմակերպչորեն ձևավորվել։

Կազմակերպված օպոզիցիան Երևանի գավառում առաջին անգամ գլուխ է բարձրացնում ԼԿԵՄ Երևանի կազմակերպության մեջ։ Օպոզիցիոն այդ խմբավորումներից էր «Տրոցկիստական երիտասարդական միություն» կոչվող խմբավորումը, որը 1923—1925 թթ. ընթացքում կանգնելով տրոցկիստական պլատֆորմի վրա, իր զարգացման վերջին շրջանում գլորվում է բացահայտ մենշևիզմի գիրկը, կտրելով իր կապերը կոմերիտմիության հետ։ «Տրոցկիստական երիտասարդական միությունը» ձևավորվելով որպես գաղտնի երիտասարդական կազմակերպություն՝ իր առաջ նպատակ է դնում պայքարել սոցիալիզմի կառուցման լենինյան ուսմունքի դեմ[30]։

Բացի վերը նշված օպոզիցիոն խմբավորումից ԼԿԵՄ Երևանի կազմակերպության մեջ ձևավորվում է ևս մեկ այլ խմբավորում, որը իրեն կոչում է «օրթոդոքս մարքսիստների» խմբակ։ Այս խմբակը տնտեսական քաղաքականության խնդիրներում կանգնելով օպոզիցիայի տեսակետի վրա, ի վերջո դարձյալ հանգում է մենշևիզմին, հերքելով Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական բնույթը[31]։ Այս խմբակը անմիջապես կապ է հաստատում մենշևիկյան տեղական կազմակերպության ղեկավարների հետ, նպատակ ունենալով պայքար մղել բոլշևիզմի դեմ։

Կոմերիտմիության Անդրերկրկոմի նախագահությունը, որի որոշումը ի դեպ հաստատվում է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի նախագահության կողմից, քննարկելով Հայաստանի կոմերիտմիության մեջ եղած հակակոմունիստական խմբավորումների մասին հարցը, նշում է. «ԼԿԵՄ Երևանի կազմակերպությունը, որը Անդրերկրկոմի ԼԿԵՄ մյուս կազմակերպությունների հետ միասին մի քանի անգամ հաջողությամբ պայքար է մղել լենինիզմի համար հակակոմունիստական խմբավորումներին տված իր մի քանի հարվածներով, ցույց տվեց իր քաղաքական անհերքելի աճը, բոլշևիկյան լենինյան կոփվածությունը և դիմացկանությունը»[32]։

1927 թ. երկրորդ կեսից իր դեմքն է ցույց տալիս նաև ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության մեջ ծվարած տրոցկիստական օպոզիցիան։ Տրոցկիզմի և նրա հովանու տակ քողարկված դաշնակցության հակասովետական պրոպագանդայի ու ազդայնական տրամադրությունների դեմ պայքարն

30 «Խորհրդային Հայաստան», 1927, № 101։
31 Նույն տեղում։
32 Նույն տեղում։

ուժեղացնելու նպատակով, ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի V պլենումը (1927 թ. 13 հունիսի) քննարկում է Երևանի կոմիտեի ագիտ-պրոպագանդայի բաժնի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին[33]։ Պլենումը նշում է, որ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի ագիտ-պրոպագանդայի բաժինը իր գործունեության հիմքում դնելով տրոցկիզմի դեմ մղվող պայքարը, նպատակասլաց պայքար չի մղել բուրժուական նացիոնալիզմի դրսևորումների դեմ։ Տեղական օպոզիցիան վերոհիշյալ պլենումում բացահայտ ելույթ չի ունենում, այդ տեղի է ունենում 1927 թ. ՀԿ(բ)Կ հուլիսյան V պլենումում, որտեղ՝ տրոցկիստական օպոզիցիայի անունից հանդես է գալիս Ռ. Սաֆրազբեկյանը։ Շարադրելով տեղական օպոզիցիայի ղեկավար եռյակի (Ռ. Սաֆրազբեկյան, Գ. Փիրգուլյան, Պ. Ղազարյան) դեկլարացիան, որը հետագայում տպագրվում է «Խորհրդային Հայաստան» թերթի հուլիսի 20-ի համարում, նրանք առերես ընդունում են կուսակցության միասնականությունը պահպանելու անհրաժեշտությունը, սակայն փաստորեն վարում են այն պառակտելու կուրս։ Նրանք մեղադրում են կուսակցությունը ներկուսակցական դեմոկրատիայի սկզբունքներից հրաժարվելու համար, բացեիբաց դեմ են դուրս գալիս կուսակցության գլխավոր գծին, սխալ համարելով նրա ներքին և արտաքին քաղաքականությունը։ Մասնավորապես նրանք կուսակցությանը մեղադրում են հարկային և տարիֆային սխալ քաղաքականություն վարելու մեջ, պատճառաբանելով, որ իբր այդ քաղաքականությունից օգտվում են միայն կուլակները և քաղաքային նեպմանները։ Հայաստանի տրոցկիստները սխալ համարելով կուսակցության նոր տնտեսական քաղաքականությունը, պահանջում են հրաժարվել ՆԷՊ-ից։ Տրոցկիզմի դեմ մղվող պայքարից Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ուշադրությունը շեղելու նպատակով, տեղական օպոզիցիան իր դեկլարացիայում առաջարկում է գաղափարական պայքարի կրակն ամբողջությամբ ուղղել կուսակցության մեջ բուն դրած նացիոնալիզմի ու սպեցիֆիզմի դեմ[34]։ ՀԿ(բ) կուսակցության V պլենումը դատապարտում ու մերժում է տեղական տրոցկիստական ղեկավար եռյակի՝ Ռ. Սաֆրազբեկյանի, Գ. Փիրգուլյանի և Պ. Ղազարյանի կողմից շարադրված դեկլարացիան։ ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի հուլիսյան պլենումի որոշումների քննարկումը ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպություններում անցնում է «Սեղմե՛նք մեր շարքերը, է՛լ ավելի ամրացնենք մեր կուսակցության պողպատե միասնականությունը» նշանաբանով։ Այս առթիվ «Խորհրդային Հայաստան» թերթը գրում է. «Երևանի կազմակերպության բոլոր բջիջներում օպոզիցիոներներին հնարավորություն էր տրվում արտահայտվել, սակայն ամեն տեղ էլ օպոզիցիան պարտություն է կրում։ Ժողովներն ամենուրեք վրդովմունքով էին դիմավորում համամիութենական օպոզիցիայի տեղական ներկայացուցիչներին, որոնք զրպարտում էին կուսակցությանը այն բանում, թե նա կուլակների շահերի պաշտպանության գիծ է բռնել, հարկային և տարիֆային ճիշտ քաղաքականություն չի վարում, թե անհրաժեշտ է լիկվիդացիայի ենթարկել նոր տնտեսական քաղաքականությունը և այլն։ Ամենից բնորոշն այն է, որ Երևանի կազմակերպության բանվորական բջիջներում օպոզիցիան միայն երկու ձայն հավաքեց։ Երևանի կազմակերպությունը իր

33 Մշի հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 4/1, գ. 966, թ. 65։
34 «Խորհրդային Հայաստան», 1927, № 165։

ամբողջությամբ այս անգամ էլ կանգնեց լենինյան դիրքերի վրա, մերժելով լենինիզմը տրոցկիզմով փոխարինելու ամեն տեսակ փորձեր»[35]։

Չնայած այն բանին, որ 1927 թ. ընթացքում տրոցկիզմը կազմակերպչորեն իր ձեավորումն է ստանում նաև ՀԿ(բ) կուսակցության Երևանի գավառային կազմակերպության մեջ, այնուամենայնիվ նա չկարողացավ իր ցանցը ընդլայնել, իր հետևից տանել կազմակերպության քիչ թե շատ մեծ թվով անդամներ, բանվորական մասսաներ։ Նրանք կտրված էին ինչպես կազմակերպության հիմնական զանգվածից, այնպես էլ բանվոր դասակարգից։ Տրոցկիզմի դեմ պայքարի կիզակետում, 1927 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Երևանի քաղաքային կազմակերպության 1581 անդամ և անդամության թեկնածուներից[36] տրոցկիզմի պլատֆորմի վրա պաշտոնապես կանգնած էին 82 հոգի, իսկ կազմակերպության 13 անդամներ ու անդամության թեկնածուներ հարում էին նրանց և հանդես գալիս որպես ոչ լրիվ ձեավորված օպոզիցիոներներ[37]։

Այսպիսով, 1927 թ. դիսկուսիայի ընթացքում Երևանի քաղաքային կազմակերպության ամբողջ կազմի 94%-ը կանգնում է լենինյան պլատֆորմի վրա, իսկ 6%-ը՝ տրոցկիստական։

1927 թ. հոկտեմբերի 26-ին գումարվում է ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության IX կոնֆերանսը։ Կոնֆերանսում ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի կատարած աշխատանքների մասին ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս Սեդրակ Սարգսյանը։

ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության IX կոնֆերանսը նշելով սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերած նվաճումները, անառարկելի կերպով հերքում է տրոցկիստական օպոզիցիայի այն պնդումները, որ իբր ՆԷՊ-ի քաղաքականությունը կուլակների ու նէպմանների քաղաքականություն լինելով, «ով՝ ում»-ի պայքարում ապահովում է մասնավոր կապիտալիստական սեկտորի հաղթանակը սոցիալիստականի նկատմամբ։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի հաշվետու զեկուցման գյուղատնտեսությանը նվիրված բաժնում նշվում է, որ 1914 թ. Երևանի գավառում բոլոր տեսակի ցանքսերի ընդհանուր տարածությունը կազմել է 37 հազար 86 դեսյատին, որը ազգամիջյան պատերազմների հետևանքով կրճատվում է մոտ 75%-ով։ Սովետական կարգերի հաստատումից հետո, նոր տնտեսական քաղաքականության շրջանակներում 1927 թ. նախապատերազմյան ցանքատարածության ընդհանուր մակարդակը ոչ միայն վերականգնվում է, այլև գերազանցվում 6000 դեսյատինով[38]։ Հաստատուն հիմքերի վրա են դրվում անասնապահությունը, այգեգործությունը, բամբակագործությունը։ Իհարկե, սա դեռևս ապացույց չէ այն բանի, որ այդ նվաճումները գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի նվաճումներն են, քանի որ օպոզիցիան կարող է պնդել, որ գյուղատնտեսության մեջ գերակշռում են մասնավոր գյուղացիական տնտեսությունները, որ սովխոզների, կոմունաների և կոլտնտեսությունների ընդհանուր կշիռը նրանցում փոքր է և, հետևաբար, վերականգ-

35 «Խորհրդային Հայաստան», 1927, № 217։

36 ՀԿ(բ) կուսակցության Երևանի կազմակերպություններ թվերով, 1927 թ. սեպտեմբեր, էջ 4։

37 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 1581, թ. 92—95։

38 «Խորհրդային Հայաստան», 1927, № 254։

նումը կատարվել է ոչ թե սոցիալիստական սեկտորի հաշվին, այլ կապիտալիստականի։ Դժվար չէ հերքել առաջին հայացքից ճիշտ թվացող այս պնդումը ևս։ Գյուղացիական բոլոր տնտեսությունները հախուռն կերպով դասել կապիտալիստական տնտեսությունների շարքը՝ սխալ է։ Սխալ է այն իմաստով, որ այդ տնտեսությունների գերակշռող մասը չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսություններ են, որոնցում չի կիրառվում ոչ վարձու աշխատանք, ոչ շահագործում։ Հարկ չենք համարում բերել Երևանի գավառի գյուղացիական տնտեսությունների սոցիալական պատկերը, քանի որ այդ մասին վերևում արդեն նշվել է։ Գյուղատնտեսության վերականգնումը և նրա հետագա զարգացումը կատարվել է ոչ թե վարձու աշխատանքի ու շահագործման միջոցով, այլ չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսություններին պրոլետարիատի պետության, կոոպերացիայի միջոցով ցույց տված նյութական օժանդակության միջոցով։ Գյուղատնտեսության վերականգման համար հաշվետու տարում այդ տնտեսություններին պետության կողմից բաց է թողնվել 792 հազար 455 ռուբլու երկարատև և կարճատև վարկ[39]։ 1927 թ. վերջում գավառի գյուղացիական տնտեսությունների 40,6%-ը կոոպերացվում է, դրանք ընդգրկվում են արտադրական գյուղատնտեսական կոոպերացիայի այնպիսի ձևերում, ինչպիսիք են՝ վարկային ընկերությունները, բամբակագործական, ծխախոտագործական, կաթնատնտեսական, խառը գյուղատնտեսական կոոպերատիվներն ու արտելները։

Պրոլետարական պետության նյութական օժանդակությամբ սնվող, կոոպերացիայի մեջ ներքաշված գյուղացիական տնտեսությունների և մասնավոր կապիտալիստական տնտեսությունների միջև հավասարության նշան դնել չի կարելի։ Չի կարելի հենց այն պատճառով, որ այդ տնտեսությունների զարգացման տենդենցը, նրանց վերակառուցումը ընթանում է ոչ թե կապիտալիստական, այլ սոցիալիստական ուղիով։ Յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության ներսում, նոր տնտեսական քաղաքականության պայմաններում տեղի են ունենում «ով՝ ում»-ի պայքար, այդ տնտեսության ներսում զարգացման կապիտալիստական ու սոցիալիստական տենդենցները բախվում են իրար։ Զարգացումը կընթանա այն ուղիով, որ տենդենցն ավելի կենսունակ է։ Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կենսունակ կարող է լինել միայն ու միայն զարգացման սոցիալիստական տենդենցը։ «Ով՝ ում»-ի պայքարը գյուղացիական տնտեսությունների ներսում, պրոլետարիատի դիկտատուրայի օրոք, նոր տնտեսական քաղաքականության պայմաններում լուծվում է հօգուտ սոցիալիստական սեկտորի։ Եվ հենց այդ են վկայում վերը նշված փաստական տվյալները գյուղացիական տնտեսությունների հարաճուն կոոպերացումը, պետության կողմից նրանց տված վարկի ընդհանուր գումարը։

ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության IX կոնֆերանսը հերքում է տրոցկիստական օպոզիցիայի այն պնդումը, թե իբր ՆԷՊ-ի պայմաններում մասնավոր առևտուրը ազատորեն մրցում է պետական և կոոպերատիվ առևտրի հետ, հաղթանակելով այդ պայքարում։ Մեծաքանակ առևտրում պետական ու կոոպերատիվ ձեռնարկությունների հաղթանակը մասնավորի նկատմամբ ապահովվում է դեռևս 1923—1924 թթ.։ 1923—1924 թթ. մեծա-

39 Նույն տեղում։

քանակ առևտրի 92,9%-ը պատկանել է պետական ու կոոպերատիվ ձեռնարկություններին, իսկ 7,1%-ը՝ մասնավոր անձանց։ 1927 թ. մեծաքանակ առևտրում մասնավոր բաժինը կրճատվելով՝ իջնում է 3,6%-ի, իսկ պետական ու կոոպերատիվ ձեռնարկություններինը աճելով՝ հասնում է 96,4%-ի[40]։

Մանրածախ առևտրում հաղթող է դուրս գալիս նաև սոցիալիստական սեկտորը։ Եթե 1923—1924 թթ. գավառի մանրածախ ապրանքաշրջանառության մեջ սոցիալիստական սեկտորի բաժինը կազմում էր 31,1%, ապա 1926—1927 թթ. մանրածախ առևտրի կեսից ավելին՝ 55,9%-ը անցնում է պետական ու կոոպերատիվ հիմնարկությունների ձեռքը[41]։ Պայքարելով գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքների գների կարգավորման ու իջեցման ուղղությամբ, ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպությունը հաշվետու տարում հասնում է զգալի հաջողությունների։ Իջեցվում են գինու, կոնյակի, օղու, կաշվի և այլ արդյունաբերական ապրանքների գները, ընդհանուր առմամբ՝ 9,4%-ով։ Գյուղատնտեսական ապրանքների գները Երևանի գավառում էժանացվում են 7%-ով[42]։ Կոնֆերանսը նշում է, որ այս հարցում օպոզիցիայի կողմից կուսակցությանը տարուցած մեղադրանքը ևս հերքվում է, քանի որ այն չի համապատասխանում իրականությանը։ Հաշվետու տարում առաջընթաց է ապրում նաև գավառի արդյունաբերությունը։ Պայքարելով կուսակցության XIV համագումարի որոշումների կենսագործման համար, ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպությունը հաշվետու տարում պայքարում է գավառի արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցման, նորերի ստեղծման, խնայողական ռեժիմի կիրառման, աշխատանքի ռացիոնալ կազմակերպման ուղղությամբ։

Սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերած նվաճումները, օպոզիցիոն խմբավորումների դեմ գաղափարական պայքարում տարած հաղթանակը վկայում են այն մասին, որ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպությունը քաղաքականապես հասուն, կազմակերպչորեն ամուր կազմակերպություն էր դարձել։

Հաշվետու շրջանում բարելավվում է նաև կազմակերպության սոցիալական կազմը, ընդլայնվում և ավելի կայուն է դառնում կազմակերպության բանվորական կորիզը։ 1927 թ. սեպտեմբերի տվյալներով, կազմակերպության ամբողջ կազմի (2338 անդամներ և անդամության թեկնածուներ) 30,4%-ը կազմում են բանվորները, 30,4%-ը՝ գյուղացիները և 39,2%-ը ինտելիգենցիան[43]։

Տրոցկիստական օպոզիցիայի այն մեղադրանքը, որ իբր կուսակցական կազմակերպությունը կտրվել է մասսաներից ու սոցիալապես վերասերվել, ժխտվում է ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության ընդհանուր վիճակը պատկերող վերոհիշյալ թվական տվյալներով։

Կուսակցության Երևանի գավառային կազմակերպության IX կոնֆերանսը վեր հանելով գաղափարական ճակատում կազմակերպության թույլ տված սխալները, նշում է, որ պայքարը նացիոնալիզմի և նրա գաղափարախոս «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության դեմ մղվել է թույլ, ոչ նպա-

---

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում։

43 ՀԿ(բ) կուսակցության Երևանի կազմակերպությունը թվերով, սեպտեմբեր, 1927, էջ 7։

տակասլաց։ Կոնֆերանսը գաղափարական ճակատում կազմակերպության գլխավոր խնդիրն է համարում՝ ուժեղացնել մարքս-լենինյան գաղափարախոսության պրոպագանդան ու ագիտացիան կուսակցականների, կոմերիտականների, աշխատավոր լայն մասսաների շրջանում, անհաշտ պայքար մղել լենինիզմը նենգափոխող ամեն երանգի օպոզիցիոն խմբավորումների ու ազգայնական տենդենցների դրսևորումների դեմ[44]։ Կոնֆերանսը ամփոփելով սոցիալիստական շինարարության բնագավառում կազմակերպության ձեռք բերած նվաճումները, իր որոշումներում խնդիր է դնում այսուհետև ևս շարունակել պայքարը հանրապետության ինդուստրացման, գյուղատնտեսության կոոպերացման, առևտրի ճակատում սոցիալիստական սեկտորի ուժեղացման համար։ Կուսակցության Երևանի կազմակերպության IX կոնֆերանսը գավառի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում սոցիալիստական սեկտորի հարաճուն զարգացման կուրս է վերցնում։

Ինդուստրացման կուրսը տարեցտարի ավելի ամուր է բռնում իր քննությունը։ Արդյունաբերությունը հիմնականում կանգնում է սոցիալիստական ռելսերի վրա, զարգանում է այդ ուղիով, սակայն գյուղատնտեսությունը դեռևս իր զարգացման տեմպերով շարունակում է ետ մնալ արդյունաբերությունից։ Մանր ու փոշիացած գյուղացիական տնտեսությունները սկսում են արգելք հանդիսանալ գյուղատնտեսության արագ զարգացման ճանապարհին։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպերի արագացումը հրամայական պահանջ է դառնում։ Այդ խնդրի հիմնական լուծումը տալիս է ՀամԿ(բ)Կ XV համագումարը, որը գումարվում է Մոսկվայում 1927 թ. դեկտեմբերի 2-ին։ Համագումարը գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման կուրս վերցնելով, մտնում է պատմության մեջ որպես կոլեկտիվացման համագումար։

ՀամԿ(բ)Կ XV համագումարի որոշումները լայնորեն քննարկվում են գավառի կուսակցական բոլոր կազմակերպություններում։

1927—1928 թթ. ընթացքում կոլտնտեսային շարժումը իր առաջին քայլերն է անում նաև Երևանի գավառում։ Գյուղկոոպերացիայի կողքին ծնվում է նրա բարձրագույն ձևը՝ կոլտնտեսային ձևը։ Այդ շարժումը ինքնաբուխ էր, ներքևից եկող։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի երրորդ պլենումը (1928 թ. ապրիլի 14), ելնելով կուսակցության XV համագումարի որոշումներից կազմակերպության առջև խնդիր է դնում գլխավորել այդ շարժումը և զարկ տալ կոլտնտեսությունների կազմակերպմանը։ Հաշվի առնելով գավառի տարբեր շրջանների առանձնահատկությունները և ելնելով գյուղատնտեսության կոլեկտիվացման գլխավոր սկզբունքներից, պլենումը անհրաժեշտ է համարում կոլտնտեսությունները կազմակերպել առաջին հերթին և գլխավորապես Երևանի գավառի Ղամարլուի (Արտաշատ), Հրազդանի և Վեդի-Բասարի շրջաններում։ Հաշվի առնելով, որ կոլտնտեսային շինարարության մեջ դեռևս բացակայում է անհրաժեշտ փորձը, պլենումը նպատակահարմար է գտնում սկսել կոլտնտեսությունների կազմակերպման պարզ ձևերից՝ հողօգտագործման ընկերություններից ու արտելներից և երբեք հանդես չբերել շտապողականություն և գրոհայնություն։ Քննարկվող հարցի առթիվ ընդունված որոշման մեջ առանձնահատուկ ընդգծվում է, որ «կոլտնտեսությունների կազմակերպումը չպետք է

44 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 964, թ. 103—104։

լինի վերից փաթաթված», այլ անհրաժեշտ է խիստ հաշվի առնել գյուղացիների ցանկությունները և կոլտնտեսությունները կազմակերպել միայն ու միայն նրանց կամավոր համաձայնությամբ[45]։

Կուսակցության ներսում ակտիվանում է աջ օպորտունիզմը Բուխարինի, Ռիկովի և Տոմսկու գլխավորությամբ։ Անտեսելով ՆԷՊ-ի շրջանում դասակարգային շերտավորումը և հակամարտությունը գյուղում, աջերը ըմբոստանում են կուլակության վրա հարձակումը ուժեղացնելու և ապա որպես դասակարգ լիկվիդացնելու կուսակցության քաղաքականության դեմ։ Նրանց կարծիքով, կարելի է կուլակներին հաշտ ու խաղաղ ներգրավել սոցիալիզմի մեջ։ Ելնելով այս հիմնական սկզբունքից, նրանք դեմ են արտահայտվում ինդուստրացմանը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը, կապիտալիստական տարրերի վերացման քաղաքականությանը։

Աջ օպորտունիզմը իր արտահայտությունն է գտնում նաև կուսակցության Երևանի գավառային կազմակերպության մեջ։ Կազմակերպության ներսում կուլակային վտանգի թերագնահատման կողմնակիցները հիմնականում հավաքագրվում են աջերի լագերում։ Հաշտվողական տարրերը կուսակցական ժողովներում բացեիբաց հայտարարում են՝ հարկ չկա կուլակներին ճնշել, «նրանք քայքայվում են տնտեսապես»[46], պետք է թույլ տալ, որ կուլակը մասնակցի սոցիալիստական շինարարությանը, «նա ի՞նչ է, որ մեկ վնաս հասցրնի»[47], հարկ չկա սրել դասակարգային պայքարը գյուղում, «եթե կուլակին սեղմենք, նա այլևս բատրակ չի պահի, իսկ բատրակն էլ սովից կմեռնի»[48]։ Ըմբոստանալով կուսակցության ինդուստրացման քաղաքականության դեմ, կազմակերպության աջ օպորտունիզմով վարակված անդամները գտնում են, որ «մեր երկիրը ինդուստրացման զարգացման համար պայմաններ չունի, ուստի պետք է հրաժարվել դրանից և զարկ տալ թեթև արդյունաբերությանը»[49]։

1928 թ. դեկտեմբերի 13-ին դումարվում է ՀԿ(բ) կուսակցության Երևանի գավառային կազմակերպության X կոնֆերանսը։

Կոնֆերանսը քննարկում և ընդհանրացնում է ՀԿ(բ) կուսակցության Երևանի գավառային կազմակերպության նվաճումները սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում։ Պայքարելով կուսակցության XV համագումարի որոշումների կենսագործման համար, 1928 թ. ընթացքում Երևանի գավառում մեծ աշխատանք էր կատարվել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ։ Ընդլայնվել էր գյուղատնտեսական կոոպերացիան ողջ գավառում։ Այդ շրջանում բնորոշը այն էր, որ գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների կողքին արագ թափով ծնունդ էին առել կոլեկտիվ տնտեսությունները։ Զգտումը դեպի այդ տնտեսությունները ավելի ուժեղ է նկատվում չքավորության շրջանում։ 1928 թ. վերջում Երևանի գավառում կոլտնտեսությունների ընդհանուր թիվը հասնում է 24-ի՝ կոլեկտիվացվում են 471 անհատական տնտեսություններ[50]։ Կոնֆերանսը խնդիր է դնում զարկ տալ կոլտնտեսային շինարարությանը, ընդլայնել նրա ցանցը,

45 Նույն տեղում, գ. 1202, թ. 18։
46 «Խորհրդային Հայաստան», 1929, № 151։
47 Նույն տեղում, 1929, № 162։
48 Նույն տեղում, 1929, № 208։
49 Նույն տեղում, 1929, № 151։
50 «Խորհրդային Հայաստան», 1928, № 290։

ավելի մեծ թվով չքավոր և միջակ գյուղացիական տնտեսություններ ընդգրկել նրանցում։ Չնայած այն բանին, որ աջ օպորտունիզմը կազմակերպչորեն իր ձևավորումը չի գտնում կազմակերպության ներսում, բայց և այնպես նա իր գործնական կիրառումն է գտնում կոոպերատիվ շինարարության և վարկային քաղաքականության կենսագործման մեջ։ Այսպես, օրինակ՝ կուսակցության Ախտայի շրջանային կոմիտեի թույլ հսկողության հետևանքով կոոպերատիվ ընկերության մեջ են խցկվում մեծ թվով կուլակային տարրեր, որոնք տեղավորվելով ընկերության ղեկավար պոստերում, պետությունից ստացած վարկի մեծ մասը հատկացնում են կուլակային տնտեսություններին, արհեստականորեն միմյանց դեմ գրգռում չքավորներին ու միջակներին։ Շրջանային վարկային ընկերության ամբողջ կազմի ավելի քան քառորդ մասը՝ 26,3%-ը կազմված լինելով կուլակային տարրերից, ստանում են հատկացված վարկի մոտ 40%-ը[51]։ Դեռևս կազմակերպության IV պլենումը (1928 թ. սեպտեմբերի 9) խնդիր դրեց անհաշտ պայքար մղել և թույլ չտալ աջ թեքման գործնական կիրառումը կյանքում, վկայակոչելով Ախտայի շրջանի «Խոտորջուրյան» կոմունայի օրինակը։ 1924 թ. Արևմտյան Հայաստանից ներգաղթած «Խոտորջուրի» հայրենակցական ազգայնական ընկերության անդամների նախաձեռնությամբ կազմակերպվում է այդ կոմունան։ Օգտվելով կուսակցական մարմինների թույլ հսկողությունից, «կոմունայի» մեջ են անդամագրվում Սովետական Միությունում ցրված նախկին խոտորջուրցիները, որոնք հանրօգուտ աշխատանքի փոխարեն զբաղվում են սպեկուլյացիայով[52]։ Շահագործելով շրջակա գյուղերի գյուղացիներին, «կոմունայում» աշխատանքները կատարվում են նրանց միջոցով։ «Կոմունայի» եկամուտը բաժանվում է խոտորջուրցի անդամների միջև։ Դժվար չէ նկատել, որ «Խոտորջուրյան կոմունան» չորս տարի անընդհատ վարկաբեկել է կոմունիստական աշխատանքի գաղափարը գյուղացիների շրջանում։ 1928 թ. բացահայտվում է աջ թեքման գործնական կիրառման այս տիպիկ օրինակը Հայաստանում, և մերկացվում են նրա կազմակերպիչներն ու խրախուսողները։ Կազմակերպության X կոնֆերանսը սրում է պայքարը աջ թեքման դեմ։ Օգտվելով այն հանգամանքից, որ բացահայտվում են աջ թեքման գործնական կիրառման մի շարք օրինակներ Հայաստանում, մասնավորապես Երևանի գավառում, կազմակերպության տրոցկիստական տարրերը կամենում են դրանք ընդհանրացնել և ցույց տալ, որ իբր նոր տնտեսական քաղաքականությունից հիմնականում օգտվում են կապիտալիստական տարրերը և որ սոցիալիզմի կառուցման համար մեզ մոտ ռեալ նախադրյալներ չկան։ Կազմակերպության X կոնֆերանսը մեկ անգամ ևս հերքում է կուսակցությունից վտարված տրոցկիստական տարրերի այդ հերյուրանքները, ցույց տալով, որ պետական վարկի առյուծի բաժինը հիմնականում ստանում են չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունները։ Ինչ վերաբերում է տրոցկիստական օպոզիցիայի այն հերյուրանքին, որ իբր կուսակցության հարկային քաղաքականությունից օգտվում են դարձյալ կուլակային տարրերը, կոնֆերանսը համոզիչ կերպով հերքում է նաև այդ։ ՀԿ(բ) կուսակցության Երևանի գավառային կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ նշվում է, որ գավառի 28 հազար գյուղացիական տնտեսությունների մեջ չքավորները կազմելով ամ-

51 Նույն տեղում։
52 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1. գ. 1373, թ. 1—93։

բողջի 46,9%-ը, տալիս են գանձվող հարկի միայն 1,9%-ը, միջակները, որ կազմում են 41,5%-ը, տալիս են գանձվող հարկի 24,3%-ը, իսկ 11,6%-ը կազմող կուլակային տնտեսությունները տալիս են գանձվող հարկի 73,8%-ը[53]։ X կոնֆերանսը ընդհանրացնում է նաև ինդուստրացման բնագավառում կազմակերպության ձեռք բերած նվաճումները։ Եթե 1923—1924 թթ. արտադրական տարում Երևանի գավառի պետական և տեղական արդյունաբերության ձեռնարկությունները տվել են 3 միլիոն ռուբլու արտադրանք, ապա 1927—1928 թթ. նրանց արտադրանքը քառապատկվելով, հասնում է 12 միլիոն ռուբլու[54]։ Հաշվետու տարում կուսակցության Երևանի գավառային կազմակերպությունը աճում է քանակապես, բարելավվում է նրա սոցիալական կազմը, ամրապնդվում է կազմակերպչորեն։ Ստորև բերվող համեմատական աղյուսակը ցույց է տալիս ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության տեղաշարժը 1927 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1928 թ. նոյեմբերի 7-ը ընկած ժամանակաշրջանում։

| Տարեթիվ | Բջջերի քանակը | Անդամները | Թեկնածուները | Միասին | Ըստ սոցիալական դրության | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | բան-վորներ | % | գյուղացիներ | % | ծառայողներ | % |
| Ս. 1 9—1927 թ.[55] | 123 | 1498 | 840 | 2338 | 712 | 30,4 | 711 | 30,4 | 915 | 39,2 |
| Ս. 1 11—1928 թ.[56] | 129 | 1837 | 933 | 2770 | 1165 | 42,1 | 740 | 26,7 | 865 | 31,2 |

ՀԿ(բ) կուսակցության Երևանի գավառային կազմակերպության X կոնֆերանսը կոմիտեի կատարած աշխատանքները գնահատում է բավարար, քաղաքական գիծը՝ ճիշտ։

1928 թ. դեկտեմբերի 17-ին գումարվում է կուսակցության Երևանի գավառային կոմիտեի առաջին պլենումը։ Պլենումը միաձայն ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի առաջին քարտուղար է ընտրում Սեդրակ Սարգսյանին։

1929 թ. ընթացքում պայքարը աջ օպորտունիզմի դեմ կազմակերպության ներսում ավելի է սրվում։ Չնայած աջերի ակտիվացմանը, այն կազմակերպչորեն չի ձևավորվում ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության մեջ։ 1929 թ. հունիսի 26-ին գումարվում է ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի երրորդ հերթական պլենումը։ Հակահարված տալով կազմակերպության աջ օպորտունիստական տարրերին, հաշտվողականներին, պլենումը խնդիր է դնում արմատախիլ անել այն կազմակերպության միջից և թույլ չտալ նրա գործնական կիրառումը կյանքում։

1926—1929 թթ. ընթացքում ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպությունը աներեր կանգնելով լենինիզմի պաշտպանության դիրքերում, անողոք պայքար է մղում տրոցկիզմի, աջ օպորտունիզմի, նացիոնալիզմի դրսևորումների դեմ, կոփվում է այդ պայքարում և ապահովում իր ավանգարդային դերը Հանրապետության սոցիալիստական վերակառուցման գործում։

---

53 «Խորհրդային Հայաստան», 1928, № 290։

54 Նույն տեղում։

55 «ՀԿ(բ) կուսակցության Երևանի կազմակերպությունը թվերով», սեպտեմբեր, 1927, էջ 3, 6։

56 «Փվական տվյալներ Երևանի գավառի կազմակերպության, արդյունաբերության և գյուղատնտեսության վերաբերյալ», Երևան, 1930, էջ 2,3։

А. П. МКРТЧЯН

# БОРЬБА ЕРЕВАНСКОЙ УЕЗДНОЙ ОРГАНИЗАЦИИ КП(б)А ЗА ПАРТИЙНУЮ ЛИНИЮ (1926—1929 гг.).

**Резюме**

В годы восстановления народного хозяйства внутрипартийная борьба в Ереванской организации КП(б)А не носила острого характера. В это время фракционная борьба переживала период своего зарождения и формирования. Вследствие новой экономической политики в городе и деревне оживились кулацкие и нэпмановские элементы. Внутри организации возникают два противоположных уклона—недооценки и переоценки кулацкой опасности. Начиная с 1926 г. фракционная борьба внутри организации оживляется. Вопрос о возможности построения социализма в нашей стране стал стержнем внутрипартийной борьбы как повсюду, так и в Ереванской уездной организации. «Новая оппозиция» имела своих сторонников и в Ереванской уездной организации КП(б)А. Ереванская уездная организация партии нанесла удар по капитулянтским элементам, сторонникам «новой оппозиции», став на защиту программы социалистической индустриализации страны.

В 1927 г. обострилась борьба против троцкизма. Троцкистская фракция получила свое организационное оформление и в Ереванской уездной организации КП(б)А. Официально троцкистсткую платформу защищали 6% всех членов и кандидатов в члены организации. Встав непоколебимо на позиции защиты ленинизма, Ереванская уездная организация КП(б)А дала отпор местным оппозиционерам, отвергая каждую попытку замены ленинизма троцкизмом.

В 1928 г. внутри партии активизировались правые. Сторонники недооценки кулацкой опасности сплотились в основном вокруг правых. Хотя правый уклон не получил в Ереванской уездной организации КП(б)А своего организационного оформления, но он имел свои конкретные и практические проявления в жизни. Борьба против правого уклона была, прежде всего, борьбой за социалистическое преобразование сельского хозяйства. Именно с этих позиций Ереванская уездная организация КП(б)А боролась против правых.

Пройдя в 1926—1929 гг. через пламя внутрипартийной борьбы, Ереванская уездная организация КП(б)А численно выросла, идейно закалилась, организационно укрепилась и твердо стала на позиции защиты ленинизма.